Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

2840

491.99-5
U-22

1887

2010

2002

Printed in Turkey

# ԲԱՆԱԼԻ

## ՀԱՅԵՐԷՆ ՇԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ

Գրեց հետեւողութեամբ

Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ԵՐՐՈՐԴ ՏԻՊ

معارف نظارت جلیله‌سنك رخصتیله طبع اولنمشدر

ԶՄԻՒՌՆԻԱ

ՏՊԱԳՐ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

1887

12018

ՀՍՍՀ-СОР
Им. А. Мясникяна

3084
39

# ԲԱՆԱԼԻ
# ՀԱՅԵՐԷՆ ՇԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ

## ՄԱՍ Ա.

### ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐ

### Ա. ԱՌԱՐԿԱՅՔ

### ԴԱՍ Ա. — Իրերու անուններ

ԿԱՆՈՆ. — Աչքիդ առջեւ եղած բաներուն անունները գրէ։ Պէտք է ամեն մէկ բառ գլխագրով սկսիլ եւ ամեն մէկուն վերջը միջակէտ մը դնել։

Օրինակ

Գրիչ. Թուղթ. Մելան. Քանոն. Ջմելին. Մատիտ. Գիրք. Կողամար. Կաւիճ. Նամակ. Կնքամոմ. Գրասեղան։

Վարժութիւն

1. Սենեկի մը մէջ եղած իրերու անուններ։
2. Դասարանի մը մէջ՝ իրերու անուններ։
3. Ագարակի մը մէջ՝ կենդանիներու անուններ։
4. Պարտէզի մը մէջ՝ ծաղիկներու անուններ։
5. Զբօսարանի մը մէջ՝ իրերու անուններ։
6. Նախաճաշիկի ատեն իրերու անուններ։

## ԴԱՍ Բ. — Թիւերու անուններ

ԿԱՆՈՆ. — Առջեւդ գտնուած բաներուն անուն-ները գրէ, ամէն մէկուն թուովը:

### Օրինակ

Գրասեղանի կամ սեղանի վրայ եղած բաներ, Չորս գրիչ. Մէկ մատիտ. Երկու գմելի. Մէկ մոմ. Երկու շիշ. Մէկ կնիք. Եօթը փուլ. Երեք գիրք:

### Վարժութիւն

1. Դաշտի մէջ եղած իրերուն անուններն ու թիւը:
2. Պարտէզի մէջ եղած իրերուն անուններն ու թիւը:
3. Դպրոցի մէջ եղած բաներուն անուններն ու թիւը:
4. Նաւու մէջ եղած բաներուն անուններն ու թիւը:
5. Եկեղեցւոյ մէջ եղած բաներուն անուններն ու թիւը:
6. Սենեկի մէջ եղած բաներուն անուններն ու թիւը:

——

## ԴԱՍ Գ. — Բարդ անուններ

ԿԱՆՈՆ. — Երկու անունով շինուած բառեր գրէ:

### Օրինակ

Գրակալ. Տողաշար. Ջրաման. Հայասէր:



### Վարժութիւն

1. Պարտէզի մէջ բաներ.
2. Գետի մէջ բաներ.
3. Փողոցի մէջ բաներ.
4. Երկնից վրայ բաներ.
5. Անտառի մէջ բաներ.
6. Դաշտի մէջ բաներ.

——

## ԴԱՍ Դ. — Խառն Դարձուածներ

ԿԱՆՈՆ. — Տեսած բաներէդ գրէ այնպիսի իրեր որ զատ զատ կրնան քակուիլ:

### Օրինակ

Թերթ մը թուղթ. Գրքի մ'երեսը. Դանակին կո-թը. Շիշի մը խիցը. Մատիտի մը ծայրը:

### Վարժութիւն

1. Գրքի մը մասերը.
2. Աթոռի մը մասերը.
3. Սեղանի մը մասերը.
4. Տան մը մասեր.
5. Պարտէզի մը մասերը.
6. Դպրոցի մը մասերը.

——

## ԴԱՍ Ե. — Տեղերու անուններ

ԿԱՆՈՆ. — Մեր քաղքին մօտ որչափ տեղերու ա-նուններ որ գիտես՝ գրէ, բոլորն ալ գլխագրով:

### Օրինակ

Իզմիրի մօտ տեղուանք. — Գարադաշ, Քորտէլիօ, Պուռնովա, Պուճա:

Վարժութիւն

1· Քաղքին Թաղերը·
2· Թաղին փողոցներ·
3· Անուանի շէնքերը·
4· Պոլսոյ արուարձանները·
5· Ասիոյ մեծ քաղաքները·
6· Փոքր Ասիոյ գաւառները.

---

### ԴԱՍ Զ· — Մարդու անուններ

ԿԱՆՈՆ· Ձեր ընտանիքին անունները ցանկի ձեւով գրէ· ամէն մէկ անուն գլխագրով սկսիր և վերջը ստորակէտ մը դիր։

Օրինակ

Ընտանիքի մը անուններ· — Պ· Տ· Ներսէսեան, Պ· Տիգրան Ներսէսեան, Պ· Կարապետ Ներսէսեան, Օրիորդ Սիրարփի Ներսէսեան, Պ· Զարեհ Ներսէսեան։

Վարժութիւն

1· Եկեղեցականներ·
2· Վաճառականներ·
3· Բժիշկներ·
4· Գրագէտներ·
5· Դասատուներ·
6· Դասընկերներ·

---

### ԴԱՍ Է· — Հաւաքական անուններ

ԿԱՆՈՆ· — Ցուցակ մը շինէ այսպիսի անուններու որ սովորաբար շատ բան մէկտեղ կը ցուցնեն։



Օրինակ

Ձիաւորներու վաշտ մը· Շուներու ջոկ մը· Ոչխարներու հօտ մը· Մեղուներու երամ մը· Ծաղիկներու փունջ մը· Նամակներու ծրար մը։

Վարժութիւն

1· Նաւեր, զինուորներ·
2· Խոտեր, Թռչուններ·
3· Աստղեր, ագռաւներ·
4· Այծեր, ծաղիկներ·
5· Ջրեր, մարդիկ·
6· Կռունկներ, ձկեր·

---

### ԴԱՍ Ը· — Ստացում

ԿԱՆՈՆ· — Գրէ մարդու մը և բանի մ'անունն, որոց մին միւսն ունենայ կամ անոր յատկացած ըլլայ։

Օրինակ

Պօղոսին գլխարկը· Մարիամին գդակը· Տղուն մատիտը· Երկու տղոց գիրքերը· Շան պոչը· Շուներուն պոչերը։

Վարժութիւն

| Ստացող | Ստացուածք |
| --- | --- |
| 1· Աննա, Պետրոս· | 4· Գլխարկ, տուներ· |
| 2· Ձի, հաւ· | 5· Գլուխ, հաւկիթ· |
| 3· Ուղտ, էշ, արջ, | 6· Վիզ, ձայն, Թաթ։ |

---

### ԴԱՍ Թ· — Վերացում

ԿԱՆՈՆ· — Երկու բառով խօսք մը շինէ, մէկը վե-

բացեալ յատկութիւն ունենայ, միւսն իրական բան մը ցուցընէ:

Օրինակ

Արեւուն պայծառութիւնը. Աղուեսին խորամանկութիւնը.
Մեղուին ժրութիւնը. Լեռին բարձրութիւնը.
Ծառին երկայնութիւնը. Շաքարին անուշութիւնը.

Վարժութիւն

Ցուցութիւն

1. Հասակ, լայնութիւն, երկայնութիւն.
2. Գեղեցկութիւն, մեծութիւն, հպարտութիւն.
3. Մթութիւն, Թարմութիւն, բարութիւն.
4. Վախ, յոյս, ոյժ, լոյս.

Իբեր

5. Տղայ, տաճար, դպրոց.
6. Արեւ, իշխան, վարժապետ.
7. Բանտ, խոտ, սիրտ.
8. Մանուկ, մարդ, կտրիճ, միտք:

## 2. ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐ

### ԴԱՍ Ա. — Պարզ յատկութիւններ

ԿԱՆՈՆ. — Առջեւդ գտնուած բաներուն անունները գրէ, նշանակելով ամեն մէկուն չափը, ձեւը, գոյնն եւ այլն:



Օրինակ

Կարմիր կնքամոմ. Ճերմակ փղոսկր. Կապոյտ մելան. Երկու հին գրիչ. Մէկ նոր գիրք. Կլոր տուփ մը. Սուր ասեղ մը. Երեք պզտիկ աշակերտներ. Աղուոր զգեստներ. Ծեր մարդիկ:

Վարժութիւն

Առարկաներ

Ժամացոյց, դանակ, մատանի, հայելի.
Գրիչ, մատիտ, քար, ծով.
Բալլեք, հող, ջուր, տնակ.
Փայտ, ածուխ, երկաթ, կաւ.
Կապար, պղինձ, ոսկի, արծաթ.

Ցուցութիւն

Նոր, հին, սուր, փայլուն.
Բութ, բարակ, կարծր, հանդարտ.
Մեծ, բուռն, վաղուն, սիրուն.
Կակուղ, պինդ, ամուր, թեթեւ.
Թոյլ, խիտ, դեղին, հաստ:

—

### ԴԱՍ Բ. — Կրկին յատկութիւններ

ԿԱՆՈՆ. — Գրէ այնպիսի անուններ որոց ամեն մէկն երկու յատկութիւն ունենայ:

Օրինակ

Կծու պաղ օրեր. Մութ կապոյտ ծով. Փայլուն սեւ

աչեր. Բարակ երկայն մազեր. Հաւատարիմ սիրուն շուներ։

Վարժութիւն

Երկինք, ամպ, արև, փոթորիկ, լեռ, լճակ, գետ, փայտ, հովիտ, կղզի, ափն, աւազ, գետնաչէրը, ալիք, անտառներ, դաշտեր, պարտէզներ։

———

ԴԱՍ Գ. — Երրեակ յատկութիւններ

ԿԱՆՈՆ. — Գրէ այլ և այլ իրերու անուններ, որոց ամեն մէկն երեք չորս յատկութիւն ունենայ։

Օրինակ

Ժիր, հնազանդ, սիրուն, տղայ. Խոշոր, ուժեղ, բարձր, վանցի մը. Աղքատ, կոյր, մուրացկան ծեր մը։

Վարժութիւն

1. Հայ, Վրացի, Տաճիկ, Ֆրանսացի, Անգլիացի, Յոյն, Պարսիկ.
2. Ձի, Կով, Ոչխար, Խոզ, Կատու, Շուն, Աղուէս, Գայլ.
3. Կարապ, Սագ, Բադ, Հաւ, Աղաւնի, Կաքաւ, Տատրակ.
4. Տարեխ, Զողաձուկն, Օձաձուկն
5. Օձ, Իժ, Գորտ, Մողէս, Աքիս, Կապիկ.
6. Ճանճ, Մժղուկ, Մեղու, Պիծակ, Թիթեռնիկ։

———



ԴԱՍ Դ. — Ածանցներ

ԿԱՆՈՆ. — Գրէ քանի մը անուններ որոց ծայրը մասնիկներ գրուելով մասնաւոր յատկութիւն մը ցուցընեն։

Օրինակ

Գործ, Գործաւոր. Ջուր, Ջրային. Մանր, Մանրէկ. Միս, Մսեղէն. Մարմին, Մարմնական. Քար, Քարոտ. Հայ, Հայերէն. Խոտ, Խոտաւէտ. Սիրտ, Սրտոտ. Սև, Սևուկ. Ադամանդ, Ադամանդեայ. Գոհ, Դժգոհ. Հաս, Տհաս, Դաս, Դասակից. Բարի, Անբարի. Զօր, Զօրեղ։

Վարժութիւն

1. Երկիր, Միտ, Քաղաք, Կուզ, Արծաթ, Թագաւոր.
2. Ժայռ, Իսրայէլ, Այգի, Միս, Կարճ, Ասուի, Հաճ.
3. Պատէհ, Մոմ, Գեղ, Ընկեր, Զագ, Հող, Գեր, Համ։

———

3084
39

ԴԱՍ Ե. — Բաղդատութիւն

ԿԱՆՈՆ. — Գրէ երկու բանի անուններ որ նոյն յատկութիւնն ունենան, բայց երկրորդին աւելի շատ տուր այդ յատկութենէ քան թէ առաջնոյն։

Օրինակ

Անուշ պտուղ, աւելի անուշ պտուղ. Երկար փողոց,



ՀՍԽՀ-СОРА

Երկարագոյն փողոց. Մեծ տուն, մեծագոյն տուն. Սիրուն ծաղիկ, աւելի սիրուն ծաղիկ։

Վարժութիւն

1. Զմելին, ժամացոյց, Քար, Փայտ.
2. Տուն, Գեղ, Լեռ, Գլուխ, Պատ.
3. Քիթ, Աչք, Բերան, Ծնօտ.
4. Եզ, Գառնուկ, Էշ, Ջորի։

---

### ԴԱՍ Զ. — Բաղդատութիւն

ԿԱՆՈՆ. — Գրէ երեք բանի անուններ նոյն յատկութիւնն ունեցող. բայց երկրորդն առաջինէն աւելի և երրորդն երկրորդէն աւելի շատ ունենայ այդ յատկութենէ։

Օրինակ

Ժիր մարդ, աւելի ժիր մարդ, շատ աւելի ժիր մարդ.
Լաւ հաց, լաւագոյն հաց, ամէնէ լաւ հաց.
Աղուոր օդ, աւելի աղուոր օդ, շատ աւելի աղուոր օդ։

Վարժութիւն

1. Սենեակ, Դուռ, Պատուհան, Յատակ, Ձեղուն, Գորգ, Նստարան.
2. Դաշտ, Ցանկապատ, Փոս, Լճակ. Գետ, Պուրակ, Ծառ.
3. Ջուր, Նաւակ, Նաւ, Ղեկ, Թիակ, Օրօրոց, Ղեկավար։



### ԴԱՍ Է. — Բաղդատութիւն

ԿԱՆՈՆ. — Գրէ Հետեւեալ յատկական անուններն երեք վիճակի մէջ, ամէն մէկը տարբեր առարկայով։

Օրինակ

Երկաթը ծանր է, արճիճն աւելի ծանր, ոսկին շատ աւելի ծանր. Երեք գիրք. առաջինը մեծ, երկրորդը մեծագոյն. երրորդը շատ աւելի մեծ. Յովհաննէս փոքր է. Թովմաս աւելի փոքր, Աննա շատ աւելի փոքր։

Վարժութիւն

1. Բարի, վատ, պզտիկ, հեռու, ծեր, Նորատի, ուշ, կանուխ.
2. Բարձր, ցած, կլոր, քառակուսի, լայն, զօրեղ, ակար.
3. Անուշ, թթու, աղի, Թարմ, սիրուն, տգեղ, նոր, հին։

## 3. ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՅԼՆ

### ԴԱՍ Ա. — Ներկայ — Մէկ անուն բայի

ԿԱՆՈՆ. — Իրի մ'անունը գրէ և ապա անոր վերաբերող բան մը գիր քովը։

Օրինակ

Գրիչը նոր է. Գիրքն օգտակար է. Շիշը պարապ է. Մաքուր է թուղթը. Սիրուն է պատկերը. Վայելուչ է զգեստը. Ձայնն անուշ է։

Վարժութիւն

1. Քաղաք, եկեղեցի, մատուռ, թանգարան, տուն, հիւղ, ամարանոց.
2. Դպրոց, վարժարան, թատրոն, բանտ, ամրոց, հիւանդանոց.
3. Դրամ, ոսկի, արծաթ, պղինձ, դահեկան, հինգանոց, քսաննոց։

---

ԴԱՍ Բ. — Ներկայ — Կրկին անուն բայի

ԿԱՆՈՆ. — Երկու բանի անունները գրէ և այնպիսի յատկութիւն մը աւելցուր որ երկուքին ալ յարմարի։

Օրինակ

Ոսկին ու արծաթը սուղ են.
Մետաքսն ու բանպակը կակուղ են.
Կարկուտն ու ձիւնը պաղ են.
Օգտակար են կաթն ու կարագը.
Հալուն են շաքարն ու աղը.
Անուշ են մեղրն ու օշարակը։

Վարժութիւն

Զմիւռնիա ու Պոլիս. Ձիեր ու կովեր. Ածուխ ու փայտ. Իւղ ու ջուր. Կաթ ու գարեջուր. Թուղթ ու գրիչներ. Կազ ու օդ. Արև ու լուսին. Ոչխար ու գառնուկներ. Տէր ու ծառայ. Նաւ ու նաւաստիներ։

---



ԴԱՍ Գ. — Ներկայ — Խառն յատկութիւններ

ԿԱՆՈՆ. — Մէկ բանի կամ բաներու անունը գրէ, ապա է բառը, եթէ մէկ բանի համար կը գրես, կամ են, եթէ երկու կամ շատ բաներ ըսել կուզես, և յետոյ մէկ քանի յատկութիւն ցուցնող անուններ աւելցուր։

Օրինակ

Մարմարը ողորկ, կարծր և պաղ է. Պղինձը կարմիր, ծանր, պինդ, ձայնոր ու կռնելի է. Ասուրին հաստ, կակուղ է և տաքուկ. Կիտի ոսկրը ալ, ճկուն է և ամուր։

Վարժութիւն

1. Ոսկի, արծաթ, երկաթ, պղինձ, անագ, կապար, անդիկ.
2. Նարինջներ, խնձորներ, տանձեր, խաղողներ, կեռասներ, նուռեր.
3. Վարդեր, շուշաններ, մանիշակներ, յասմիկներ, նարգէս, մեկոն։

---

ԴԱՍ Դ. — Ներկայ — Մասնական յատկութիւն

ԿԱՆՈՆ. — Բաղադրեալ բանի մը մէկ մասին անունն առ գրէ և այն մասին յատկութիւնը յիշէ։

Օրինակ

Դ[illegible] դուռը կարմիր է. Ճերմակ լեռին [illegible]. Նոր է [illegible] պատերը, բայց [illegible] հին են. դպրոցին պատուհանները մութ են, բայց պարտէզը [illegible] է։

### Վարժութիւն

Սեղան, տուն, գիրք, նաւ, գրասեղան, ծառ, ձի, էշ, երկինք, խանութ, ձեռք, դէմք, ժամացոյց, ոտք։

---

## ԴԱՍ Ե. — Գործ անցեալ — էր, էին

ԿԱՆՈՆ. — Առարկայի մ'անունը գրէ, և ապա անոր առարկային երբեմն ունեցած մէկ յատկութեան անունն աւելցուր։

### Օրինակ

Նոր էր ժամացոյցը. Պզտիկ էր տղան. Ամպերը մութ էին. Հովը սաստիկ էր. Ծովը ալեկոծ էր. Կերակուրը տաք էր. Ջրերը պղտոր էին։

### Վարժութիւն

1. Սեղաններ, գործեր, հայելիներ, պնակներ, աթոռներ.
2. Մառաններ, մսուրներ, ախոռներ, սրահներ, խուցեր.
3. Կողի, պանիր, թէյ, շաքար, աղ, հաց, կաթ, սուրճ։

---

## ԴԱՍ Զ. — Կատարուած գործ

ԿԱՆՈՆ. — Գրէ մի քանի խօսքեր որոց մէջ գործողութիւն մը կատարուեր է.



### Օրինակ

Յովհաննէս այսօր դպրոց գնաց. Շատ գիրքեր կորսուած են. Աշակերտներն այսօր շատ աշխատեր են. Մեծ նաւեր հասան նաւահանգիստը. Մեր դասերը դիւրին եղան. Եղբօրս տունը նոր շիներ են։

### Վարժութիւն

Դանդաղ, ճարպիկ, ծոյլ, երկչոտ, քաջ, հաճելի, օգտակար, ուժեղ, ժիր, զուարճալի, աշխատասէր, գնաց, կորան, եղան, առին, և այլն։

---

## ԴԱՍ Է. — Անցեալ գործ

ԿԱՆՈՆ. — Գրէ այնպիսի խօսքեր որոց մէջ գործ մը կը պատմես որ անցած է։

### Օրինակ

Ծեր մարդը քեզի հանդիպեր է. Շունն իր վրայ յարձակեր է. Նամակներն ուշ հասեր են ձեռքը. Սպասաւորը աւլեր է սենեակները։

### Վարժութիւն

1. Կանոնաւոր, պարկեշտ, ուսումնասէր, չար, հեռու.
2. Տետրակներ, աղջիկներ, տղայք, մարդիկ, տուն.
3. Գրեր էին, տեսեր էի, փորձառել, պատմել, շինել։

---

### ԴԱՍ Ը. — Լինելիք գործ — պիտի

ԿԱՆՈՆ. — Գրէ այնպիսի խօսքեր որոց մէջ պիտի գործածես։

Օրինակ

Գետը պիտի սառի վաղը. Այսօր ձիւն պիտի գայ. Դու հանգիստ պիտի լինիս. Պօղոս գիրք մը պիտի ընթեռնու. Փողոցը տղմոտ պիտի լինի։

Վարժութիւն

1. Ցորեն, յարդ, պտուղ, բրինձ, գարի, հաճար.
2. Առատ, չոր, անուշ, ճերմակ, լեցուն, սուղ։

---

### ԴԱՍ Թ. — Գործողութիւն — կենդանիք

ԿԱՆՈՆ. — Գրէ այլ և այլ կենդանիներու անուններ յայտնելով թէ ինչ կ՚ընեն։

Օրինակ

Ձին կը վազէ. Ոչխարը կը մայէ. Թռչունը կը թռչի. Որդը կը սողայ. Եղջերուն կ՚ոստոստէ. Գայլը կ՚ոռնայ. Մեղուն կը բզզայ. Աքլորը կ՚երգէ։

Վարժութիւն

1. Կով, էշ, վագր, փիղ, ուղտ, արջ, օձ, կատու։
2. Ծիծեռնակ, աղաւնի, արծիւ, անգղ, ճնճղուկ, սարեկ։
3. Ձուկ, տառեխ, գայլաձուկ, օձաձուկ, կէտ։

---



### ԴԱՍ Ժ. — Գործողութիւն — Անկենդան

ԿԱՆՈՆ. — Գրէ այլ և այլ բաներու անուններ յայտնելով թէ ինչ կ՚ընեն։

Օրինակ

Ոսկին կը փայլի. Ադամանդը կը շողայ. Ջուրը կը հոսի. Ծաղիկները կը ծաղկին. Ծովը կ՚ալեկոծի. Տաք օդը վեր կ՚ելնէ. Ձիւնը կը հալի. Հովը կը փչէ. Բարտին կ՚երերէ.

Վարժութիւն

Վարդեր, նարինջ, փղոսկր, հայելի, կաթ, պողպատ, ծառեր, ծով, կայծակ, փայլակ, մշուշ, կարկուտ, կաղնի, աստղեր, ձիւն։

---

### ԴԱՍ ԺԱ. — Գործողութիւն — խառն

ԿԱՆՈՆ. — Գրէ այլ և այլ իրերու անուններն և երկու կամ աւելի գործողութիւններ։

Օրինակ

Բադերը կը լողեն, կը քալեն և կը թռչին. Տղաք կը խաղան, կը վազեն և կը ցատկեն. Քանի մը միջատներ կը թռչին, կը բզզան և կը խայթեն. Մարդիկ կը խորհին, կը խօսին և կը գործեն. Աչքը կը ժպտի ու կը լայ։

Վարժութիւն

1. Ջայլեամ, կէտ, կոկորդիլոս, ռնգեղջիւր, լուսին, ինձ, կուղբ.

2· Կնձնի, կաղնի, մայրի, թութ, կաղին, խնձոր, սալոր, այգի·

3· Մարմար, լաւա, քար, մետաղ, աւազ, կրաքար։

---

### ԴԱՍ ԺԲ· — Գործողութիւն — Զանազան ժամանակ

ԿԱՆՈՆ· — Խօսքեր գրէ որոց ամեն մէկը գոնէ երեք բառ ունենայ· ա) Գործող անձին կամ իրին անունը· բ) Գործողութիւն յայտնող բառը· գ) Այն անձին կամ իրին անունն որու վրայ գործողութիւնը կը դառնայ։

Օրինակ

Տղան կը ծեծէ շունը· Պօղոս գրեց նամակը· Կատուն բռնեց մուկը· Նաւաստին շինեց նաւակը· Աշակերտը կը սորվի իր դասը· Սպասաւորը դուռը բացաւ։

Վարժութիւն

1· Ցեսնել, լսել, ուտել, շարժել, օրել, նետել, կանչել, պատմել,

2· Կարդալ, գծել, բերել, սկսիլ, ծախել, կտրել, փառել·

3· Այրել, փորել, օգնել, սպաննել, բռնել, վերցընել, զրկել, մանել։

---

### ԴԱՍ ԺԳ· — Գործողութիւն եւ այլն

ԿԱՆՈՆ· — Նախադասութիւն մը գրէ որ առ նուազն հինգ գլխաւոր բառ պարունակէ· ա) Գործողին



անունը· բ) Գործողին յատկութիւնը· գ) Գործը· դ) Առարկային անունը· ե) Առարկային յատկութիւնը։

Օրինակ

Պզտիկ տղան նետեց մեծ քարը· Այս խելօք աշակերտը պատռեց աղուոր գիրք մը· Ծեր մարդը շինեց գեղեցիկ տուն մը· Քաջասիրտ զինուորը ազատեց իր բարի մայրը։

Վարժութիւն

1· Աշխատիլ, եփել, շահիլ, պատրաստել, օրինակել, ընտրել, մշակել·

2· Կարել· ջնջել, ընդունիլ, մերժել, խմել, սպաննել, գլորել·

3· Գնել, ծախել առնուլ, տալ, փնտռել, գտնել, ծալել,

---

### ԴԱՍ ԺԴ· — Գործողութիւն եւ այլն

ԿԱՆՈՆ· — Նախադասութիւն մը գրէ, ինչպէս որ արդէն գրեցիր· միայն գործողին կամ առարկային երկու յատկութիւն տալով։

Օրինակ

Խեղճ պզտիկ տղան կ'առաջնորդէ կոյր ծեր մարդը· Այս ժրաջան խելօք աշակերտը պատռեց աղուոր գիրք մը· Այս մանր թեթեւ կաթիլները կը մաշեն մեծ կարծր քարեր։

### Վարժութիւն

1. Խաշել, վաստըկիլ, խորտակել, միաւորել. Նորոգել, կապել.
2. Դիտել, հաւաքել, շարել, կարգադրել, մոռնալ, ջնջել։

—•—

## 4. ԱՌԱՐԿԱՆԵՐ

### ԴԱՍ Ա. — Անուններու տեղ բառեր

ԿԱՆՈՆ. — Առարկային անունը դնելու տեղ, գրէ բառ մ'որ անոր պաշտօնը վարէ։ Քու անունդ գրելու տեղ **Ես** գրէ. Պետրոս գրելու տեղ՝ **Ան** գրէ, հայր ու մայր գրելու տեղ, **Անոնք** գրէ և այլն։

### Օրինակ

**Ես** դուռը բացի. սպասաւորը ցուցեց **զայն**. **Ես** ներս մտայ, իմ մուճակներս մաքրեցի, իմ գլխարկս հանեցի և նստայ. Կարապետ դպրոցէն եկաւ. **Ան** ցցուց ինձ իր տետրակները, որ մաքուր էին. Ետք **ան** գնաց իր քրոջ քով. **Ան** ալ պարտէզը կը խաղար։

### Վարժութիւն

1. Բաժնել, զատել, գոցել, ծածկել, բանալ.
2. Տնկել, պաշտպանել, խնամել, հերկել։



### ԴԱՍ Բ. — Դերանուն

ԿԱՆՈՆ. — Նախադասութիւններ գրէ հետեւեալ բառերով։

**Ես, զիս, ինծի.**     **Մենք, մերինը, մեզ։**

### Օրինակ

**Ես** գրեցի իմ հրահանգս. Ան ծեծեց **զիս**. Աշոտ տուաւ **ինծի** այս սիրուն շունը. **Մենք** կորսնցուցինք **մերինը**։

### Վարժութիւն

1. Թռիլ, քալել, կենալ, վազել, գրել, կարդալ.
2. Խօսիլ, ցատկել, պարել, երգել, որսալ, հեծնալ։

---

### ԴԱՍ Գ. — Դերանուն

ԿԱՆՈՆ. — Նորէն գրէ խօսքեր այս բառերով։

**Դուն, քուկդ, քեզ.**     **Դուք, ձերինը, ձեզ։**

### Օրինակ

**Դուն** իմ բարեկամս ես. Այս **քուկդ** է. Տեսայ **քեզ**. **Դուք** տուիք ինծի այս նոր ժամացոյցը. Ան երէկ **ձերինը** խորտակից. Քիչ օրէն **ձեզ** պիտի տեսնեմ։

### Վարժութիւն

1. Յուսալ, մտածել, զատել. բաղդատել, յարգել, պատուել.

2. Հանդիպիլ, բարձել, հարցնել, գթալ, զարմանալ, մեկնիլ.

3. Հրամայել, հնազանդիլ, կատարել, թողուլ, տանիլ, ներել։

---

## ԴԱՍ Դ. — Դերանուն

ԿԱՆՈՆ. — Առաջուան պէս գրէ խօսքեր, հետեւեալ բառերով։

ան, աս, անոր, ինք. անոնք, ասոնք, անոնց։

### Օրինակ

Ան իմ քեռիս է. Իր ձին վար նետեց զինք. Իր գիրքն անոր տուի. Անոնց բան մը չըսի. Աս յիմար է. Անոնք իմ հօրս բարեկամներն են. Տեսայ զանոնք այսօր. Անոնց գործը լմնցուցին. Ասոնք ծուր են։

### Վարժութիւն

1. Ընդունիլ, գործածել, նկարել, ներկել, հանել, գալ.

2. Ելնել, քալել, վազել, ընկնիլ, ճանբորդել, մոլորիլ.

3. Դառնալ, պառկիլ, քնանալ, երազել, արթննալ, լուալ.

---

## ԴԱՍ Ե. — Դերանուն

ԿԱՆՈՆ. — Նորէն գրէ նախադասութիւններ, այս բառերով։

իմս, իմը, անոր, մերը, ձերը, անոնցը.



### Օրինակ

Այս գրիչն իմս է. Իմը կորսնցուց, Անորը կոտրեցաւ. Մերը նոր է. Ձերը հինցաւ. Ես ստակ տուի անոր. Իրենցը գողցան. Անոնք իրմէ աւելի բախտաւոր են. Մենք իրենցմէ աւելի խոնարհ ենք։

### Վարժութիւն

1. Լարել, հինել, յղկել, սրբել, մաքրել, թոյլ տալ.

2. Ամբաստանել, գովել, դատապարտել, վարձատրել, յաղթել, տալ.

3. Ջրել, ղտել, հրել, ճարել, հնարել, բանիլ, համբել։

---

## ԴԱՍ Զ. — Դերանուն (Յարաբերական)

ԿԱՆՈՆ. — Հետեւեալ բառերով նախադասութիւններ շինէ։

որ, որուն, ուր, որն որոց, որոնց, որով.

### Օրինակ

Ես կը սիրեմ այն մարդն որ կ'աշխատի. Այն աշակերտն՝ որուն վրայ խօսեր էիր, պատիժ կրեց. Հիւանդներն՝ զոր դարմանեց բժիշկը, հիմայ աղեկ են, Ջինուորին քաջութիւնն, որով յաղթեց թշնամին, գովեստի արժանի է. Ընտիր են այս խնձորներն որոնցմէ երեք հատ կերայ. Շնորհակալ եղայ ընկերիս, որմէ փոխ առեր էի այս գիրքը։

Վարժութիւն

1. Ժողովուրդ, տղայք, հայր, մայր, թռչուն, ձուկ, նուռ.
2. Մորթ, բուրթ, մուշտակ, դրացիններ, բարեկամներ, մշակ.
3. Դերձակ, գրատուն, հացագործ, զինուորներ, գիւղեր։

———

### ԴԱՍ Է. — Դերանուն (Ցուցական)

ԿԱՆՈՆ. — Հետեւեալ բառերով նախադասութիւններ գրէ։

այս, այդ, այն, նոյն, ասոնք, անոնք.

Օրինակ

Սուղ է իմ գիրքս. Այդ կ'արժէ հինգ ղուրուշ. Այն տասնոց մը. Նոյնն ունիմ. Այդ բլուրները ծաղկաւէտ են. Ասոնք հասուն պտուղներ են. Անոնց մէկը շատ խոշոր է. Նոյն ճամբէն անցայ։

Վարժութիւն

1. Տուն, դաշտ, բլրակ, արեւ, աստղ.
2. Եկեղեցի, քաղաք, գաւառ, տէրութիւն.
3. Ծով, նաւ, կղզիներ, ժայռեր, խորշեր։

———



### ԴԱՍ Ը. — Դերանուն (Ստացական)

ԿԱՆՈՆ. — գրէ նախադասութիւններ հետեւեալ բառերով։

իմս, քուկդ, իրը — մերինը, ձերինը, իրենցը։

Օրինակ

Այս մոմն իմս չէ. Իրը ճերմակ պիտի լինի. Իմ եղբայրս դպրոց գնաց. Քուկդ շուկայ իջաւ. Մերինը փողոցները կը պտըտի. Ձերինները կը կարդան։

Վարժութիւն

1. Օղ, անուշ, աչք, ձայն, կրակ.
2. Գոյն, գլուխ, մազ, վիզ, այտ, ծնօտ.
3. Թեւ, ձեռք, մատ, ոտք, ական։

———

## 5. ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔ

### ԴԱՍ Ա. — Մակբայ (Որպիսական)

ԿԱՆՈՆ. — Գրէ նախադասութիւններ՝ յայտնելով թէ ինչպէս կամ ինչ կերպով գործողութիւն մը կատարուած է։

Օրինակ

Գառնիկ կրնայ գրել, բայց Իսկուհին կարող է աղուոր գրել. Տիգրան ուղիղ կը խօսի. Մայրը գորովանօք կը սիրէ իր զաւակը. Բարեկամս ծիծաղելով շնորհակալ է ինձմէ. Զինուորը քաջաբար կռուեցաւ. Քեզի հետ բարեկամօրէն վարուեցաւ։

Վարժութիւն

1. Այսպէս, ճիշդ, վատաբար, փափկութեամբ, ծանրօրէն, թեթեւօրէն.

2. Հաստատօրէն, կարճ, նորօրէն, անուշութեամբ, դառնօրէն.

3. Շեղակի, ճշգիւ, նիւթօրէն, հօրէն, մտօքին. ընտրանօք։

——

ԴԱՍ Բ. — Մակբայ (Ժամանակական)

ԿԱՆՈՆ. — Նախադասութիւններ գրէ հարցնելով կամ յայտնելով թէ գործողութիւն մը երբ կատարուեր է։

Օրինակ

Ե՞րբ մեկնեցաւ Իզմիրէն. Երէկ չը՞պիտի տեսնեմ զինք. Այն օրէն աշակերտը բացակայ էր. Հիմակ կրնա՞մ գրել նամակը. Առջին ճամբայ ելեր էր։

Վարժութիւն

1. Առ ժամ, իսկոյն, որովհետեւ, մինչդեռ, միանգամ, նախ.

2. Յաճախ, ստէպ, օր ըստ օրէ, միշտ, երբեմն, ծանրապէս.

3. Արագօրէն, շուտով, արդէն, վաղը, այսօր, ապա։

——



ԴԱՍ Գ. — Մակբայ (Տեղական)

ԿԱՆՈՆ. — Նախադասութիւններ գրէ հարցումներ ընելով կամ պատասխան տալով գործողութիւն մը կատարուած տեղի մը վրայ։

Օրինակ

Ո՞ւր ընկաւ Մեծն Վարդան. Ո՞ւր էիր երբ հայրս եկաւ. Անդ չէիր. Ո՞ւրկէց կը դառնար բարեկամս. Ներքեւէն կ'ըզգար իր յանցանքը։

Վարժութիւն

1. Հոս, հոն, դրսեն, ներսեն, անդին, ասդին, հեռուէն։

2. Մօտէն, քովընտի, մէկուսի, ուստի, անկից, ընդառաջ.

3. Ստորեւ, վերեւ, ներքնակողմ, վարէն, վերէն, վերուստ։

——

ԴԱՍ Դ. — Մակբայ (Քանակական)

ԿԱՆՈՆ. — Խօսքեր գրէ յայտնելով թէ որչափ գործ կատարուած է։

Օրինակ

Շատ քիչ խօսեցաւ. Կարծեմ թէ [illegible] կը կասկածի. Շատ գովեցի անոր ընտիր վարմունքը. Հազիւ կրցաւ կտոր մը հաց ուտել. Բաւական լաւ կը գտնէ այս բաները։

### Վարժութիւն

1. Շատ, չափէն աւելի, յետին աստիճան, անչափ, մասամբ.

2 Առատապէս, սակաւ, հիմնովին, բոլորովին, այսքան.

3. Շռայլաբար, գլխովին, այսչափ, որչափ, յետին ծայր

———

## ԴԱՍ Ե. — Մակբայ (Հաստատական կամ ժխտական)

ԿԱՆՈՆ. — Գրէ նախադասութիւններ որոց մէջ բան մը կամ կը հաստատես կամ կը մերժես։

### Օրինակ

Օդը տաք մը չէ. Կրնա՞մ տուն երթալ. Ո՛չ, պարտաւոր ես աստ մնալ. Նա չբերեր իր դասը. Կրնա՞յ խաղալ, այո՛։

### Վարժութիւն

1. Հա՛, այո՛, ո՛չ, բնաւ, անհունս, որոշապէս.

1. Ճշմարտապէս, իրաւի, արդարեւ, անշուշտ.

3. Ամենեւին, ստուգապէս, երեւութապէս, հիմնապէս։

———

## ԴԱՍ Զ. — Մակբայ (Տարակուսական կամ ստուգական)

ԿԱՆՈՆ. — Գրէ տարակոյս կամ ստուգութիւն յայտնող մակբայներ։



### Օրինակ

Թերեւս իր խոստումը չբռներ. Գուցէ վաղը կը հասնի. Հաւանապէս նամակը կորսուած է. Գիտեմ ստուգապէս այս բանը։

### Վարժութիւն

1. Գուցէ, դիպուածով, յանկարծակի։

2. Անշուշտ, ստուգիւ, անկասկած։

# 6. ԱՌԱՐԿԱՅԻՑ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ

## ԴԱՍ Ա. — Յետադրութիւն

ԿԱՆՈՆ. — Յետադասութիւններ գրէ՝ իւրաքանչիւրը հետեւեալ բառերուն մէկուն հետ կապելով։

վրայ, մէջ, դէմ, ետքը, մէջէն, շուրջը

### Օրինակ

Դրի գիրքը սեղանին վրայ. Նաւակին մէջ հինգ հոգի կար. Ժողովուրդը թագաւորին զօրաց դէմ ելաւ. Աշխատութենէ ետքը պիտի հանգստանամ. Այս կենդանին քարայրին մէջէն դուրս ելաւ. Գլխուն շուրջը կապեց։

### Վարժութիւն

1. Երկիր, գործ, գետ, ճաշ, տուն, վանք.

2. Օրենք, հով, պատ, երկինք, ծովափ, լիճ.

3. Դպրոց, սրահ, տանիք, շտեմարան, բազմոց։

———

ԴԱՍ Բ. — Շարադրութիւն

ԿԱՆՈՆ. — Շարադասութիւններ գրէ հետեւեալ բառերով.

մէջ, բոլորտիքը, դէպի, մօտ, քով է.

Օրինակ

Հովիւը հօտին մէջն էր. Նաւը դէպի կղզին կը սա-հէր. գողը տան բոլորտիքը կը շրջէր։

Վարժութիւն

1. Գլուխ, նաւ, խաղաղութիւն, պատերազմ, հրա-ման.

2. Մարդիկ, ճամբայ. պալատ, զինուոր։

---

ԴԱՍ Գ. — Շարադրութիւն

ԿԱՆՈՆ. — Խօսքեր գրէ հետեւեալ բառերով։

առջեւ, ետեւ, տակը, մօտ, տեղ։

Օրինակ

Յանցաւորներն դատաւորին առջեւն եկան. Կատուն սեղանին տակ նստաւ. Նամակը գրելէն ետեւ գոցեց. Բլրին մօտ կանգ առաւ. Կը խաղար գրելու տեղ։

Վարժութիւն

1. Ջրապան, լեռ, բլրակ, լուսին, զօրապետ.
2. Սուր, առուակ, իշխան, հայր, հրեշտակ։

---



ԴԱՍ Դ. — Շարադրութիւն

ԿԱՆՈՆ. — Նախադասութիւններ գրէ հետեւեալ բառերով.

համար, առաջ, դիմացը, փոխանակ, տակ.

Օրինակ

Դպրոցին համար իր աշխատութիւնը սկսաւ. Վար-ժապետին գալէն առաջ դասս սերտեր էի. Մեր տան դիմացը պարտէզ կայ. Փոխանակ գործելու կը խօսի. Ծրաջան է տան գլխ։

Վարժութիւն

1. Ծառայութիւն, աթոռ, պաշտօն, պատկեր, խաղ.
2. Ոսկի, գանձ, տարի, ժիր, ծով, լճակ։

---

ԴԱՍ Ե. — Շարադրութիւն

ԿԱՆՈՆ. — Հետեւեալ բառերով նախադասութիւն-ներ գրէ։

հետ, առանց, ի վեր, ըստ, ներքեւ.

Օրինակ

Եղբօրս հետ գիւղը գնաց. Առանց հրամանի դուրս ելաւ. Ամսէ մը ի վեր գործն աւարտած է. Կը վարուի ըստ օրինաց։

Վարժութիւն

1. Ծառ, ձոր, ծածկոց, դաստիարակ, դուրս.
2. Դրամ, ուսում, դաս, աւանդ։

---

## 7. ԿԱՊՈՂ ԲԱՌԵՐ ԵՒ ԱՅԼՆ

### ԴԱՍ Ա. — Շաղկապ

ԿԱՆՈՆ. — Քանի մը անուններ կապէ մէկ նախադասութեան մէջ։

Օրինակ

Երկաթ, պղինձ և կապարը շատ օգտակար մետաղներ են. Աստղերն ու Արևը աւելի պզտիկ են քան Երկիրը. Ծովն և օդը կը շրջապատեն Երկիրը։

Վարժութիւն

1. Սատուրնոս, Հերշէլ, Արամազդ.
2. Աստղեր, մոլորակներ, արբանեակներ.
3. Ծառեր, տունկեր, ծաղիկներ, խոտ.
4. Ոսկի, արծաթ, անագ, սնդիկ, թիթեղ.
5. Աղուէս, վագր, ինձ, քուռակ, եղջերու, ցլիկ։

---

### ԴԱՍ Բ. — Շաղկապ

ԿԱՆՈՆ. — Միացուր երկու կամ երեք ածականներ որ կրնան նոյն անուան հետ գործածուիլ։

Օրինակ

Թեղօշի փայտը կարծր, դեղին և թեթև է. Երէկ ցուրտ, խոնաւ ու անձրևոտ օր մ'էր. Կարծր, ողորկ, բարակ և թափանցիկ է ապակին։



Վարժութիւն

Ճերմակ, փայլուն, նուրբ, Մաքուր, անգոյն, անհամ. Նորատի, զուարթ, անհանդարտ. Պայծառ, կապոյտ, յստակ. Կակուղ, թթու, թուխ. Սրատես, հուժկու, անվախ։

---

### ԴԱՍ Գ. — Շաղկապ

ԿԱՆՈՆ. — Գրէ նախադասութիւններ այնպէս որ նոյն անուան (անուն բայի) վերաբերեալ երկու երեք բայ իրարու կապուին։

Օրինակ

Ծաղիկները կը բուսնին ու կը ծլին. Արևը կը լուսաւորէ, կը տաքցնէ և կենդանացնէ մարդիկը. Այս տեղ օրիորդը կը ծիծաղի, կերգէ ու կը պարէ. Ապրեցաւ ու մեռաւ նա իր հայրենիքին համար։

Վարժութիւն

1. Սարդ, ոզնի, սկիւռ, ճագար, խլուրդ, ջորի.
2. Վիթ, այծեամն, կուղ, ոչխար, այծ, վարազ.
3. Սարիկ, ճնճղուկ, ագռաւ, տարմահաւ, ճպուռ։

---

### ԴԱՍ Դ. — Շաղկապ

ԿԱՆՈՆ. — Գրէ նախադասութիւններ երկու ե-

րեք առարկայ իրարու կապելով այնպէս որ մի և նոյն բայէն ներգործուին։

Օրինակ

Ձի մը ցորէն, գարի ու խոտ կ'ուտէ. Բարի մարդն կը սիրէ իր ընտանիքն, իր բարեկամներն և իր հայրենիքը. Վասպուրականն ունի աղուոր լիճեր, գետեր, լեռներ ու հովիտներ։

Վարժութիւն

1. Անալութ, եղնիկ, ջայլեամ, կռունկ, կկու.
2. Սամոյր, գոմէշ, օձ, մրջիւն, փիղ, յովազ.
3. Վան, Կարին, Կարս, Անի, Մուշ, Չուղայ.
4. Զօրապետ, նաւարար. գրագիր, բարերար։

———

ԴԱՍ Ե. — Շաղկապ

ԿԱՆՈՆ. — Գրէ նախադասութիւններ մէկ քանի մակբայներով որ նոյն բային որպիսութիւնը ցուցընեն։

Օրինակ

Աշխէն պարզօրէն և վայելչութեամբ կը հագուի. Նուարդ շուտ, շիտակ և անխոնջ կը քալէ. Արամ անխնայ, անգթօրէն և արիաբար վարուեցաւ թշնամիներուն հետ։

Վարժութիւն

1. Շինել, ստիպել, թրջել, ելնել, կշռել, յաղթել.



2. Քալել, գիտնալ, կռուիլ, տեսնուիլ, խնամել.
3. Շարժել, արշաւել, յարձակիլ։ Երեւիլ, դիմադրել.
4. Մտածել, որոշել, գործել, բաժնել, ածել, սիրել։

———

ԴԱՍ Զ. — Շաղկապ

ԿԱՆՈՆ. — Նախադասութիւններ գրէ երկու երեք նախադրութիւններով։

Օրինակ

Սպասաւորներն իշխանին աղջիկն ու տղէն կը վազէին. Սանդղէն վեր ու վար կ'ելնէր կ'իջնէր. Թռչունները կամուրջին վրան ու տակը կը թռին։

Վարժութիւն

1. Երթալ, գալ, նստիլ, քալել.
2. Կարդալ, գրել, երգել, պարել.

———

ԴԱՍ Է. — Շաղկապ

ԿԱՆՈՆ. — Գրէ նախադասութիւններ որոց իւրաքանչիւրն շաղկապով մը միացած երկու մաս ունենայ։

Օրինակ

Երանի հեզերուն, վասն զի անոնք պիտի ժառանգեն երկիրը։ Նա քաջառողջ է, վասն զի ժուժկալ է։ Նա սենեակը մտաւ հանդարտօրէն և անմիջապէս աթոռն առաւ նստաւ։

Վարժութիւն

1. Ընտանի, արտաքին, ընդհանուր, մեծ, չիտակ։
2. Գլխաւոր, զուգահեռական, ներքին, խոհեմ, սիրուն։
3. Հաստատ, կենսական, լայն, բարի, սուր։
4. Մութ, փափուկ, անկողին, սուտ. լուրջ։

——

ԴԱՍ Ը. — Շաղկապ

ԿԱՆՈՆ. — Հարց ու պատասխանով նախադասութիւններ գրէ, սկիզբն ինչո՞ւ համար և վերջը վասն զի դնելով։

Օրինակ

Ինչո՞ւ համար ոգելից ըմպելիք չես խմեր, վասն զի վնասակար են։ Ինչո՞ւ համար սառնը կը ծփայ ջրի վրայ, վասն զի ջրէն աւելի թեթեւ է։

Վարժութիւն

1. Շանթ, կարկուտ, ձիւն, անձրեւ, ծիածան։
2. Խաւարում, շոգի, ջերմութիւն, ջուր, օդ, կազ։

——



ԴԱՍ Թ. — Շաղկապ

ԿԱՆՈՆ. — Գրէ նախադասութիւններ և որ բառով կապէ։

Օրինակ

Սաէպ կ'ըսէր, որ ընիկ կրկէրը չէր գացած. Լաւ ապրէ որ երջանիկ լինիս. Պատուհանը բաց որ թռչունը թռի երթայ, Թող դասը մտադիր կարդայ որ լաւ հասկնայ։

Վարժութիւն

1. Ուղեղ, միտք, գործարան, զգայարանք, պատկերներ, մտածմունք։
2. Անբաժանելի, տարբեր, անկախ, մտաւոր, ազատ։
3. Գծել, վարուիլ, յարդարել, միաբանել, կազմել։

——

ԴԱՍ Ժ. — Շաղկապ

ԿԱՆՈՆ. Գրէ նախադասութիւններ հետեւեալ բառերով։

Եթէ, քանի որ, ուրեմն, ուստի։

Օրինակ

Երբ հայրդ տունն է, ըսէ անոր որ զինք տեսնել կ'ուզեմ. Քանի որ կը զժկամակիս աշխատելու պիտի

պատժուին. Պարտքդ կը ճանչնաս, ուրեմն վճարէ. Ինք ուղիղ ճամբան թողուց, ուստի ես իրմէ բաժնուեցայ։

Վարժութիւն

1. Բարեսրտութիւն, արդարութիւն, խիղճ, յոյս, լոյս.
2. Բնաւորութիւն, հաճոյք, անձեր, դէպքեր, հրահանգ.
3. Դժուարին, ծիծաղաշարժ, այլանդակ, անսասան։

---

ԴԱՍ ԻԱ. — Որոշիչ շաղկապներ

ԿԱՆՈՆ. — Գրէ նախադասութիւններ այս բառերով.

որ, թէպէտեւ, սակայն, կամ, բայց, այլ, գոնէ, ալ, հապա։

Օրինակ

Ստոյգ եմ որ ու խմած է յանցանքը ու քուկդ. Դուրս պիտի ելնեմ, թէպէտեւ օդը գէշ է. Ինք տուաւ այս խրատը, սակայն չբռնեց. Կամ խնձոր պիտի ուտէ կամ տանձ. Եղէգը կը ծռի բայց չը կոտրիր. Բնաւորն չէ յանցաւորն, այլ իր ստրուկները. Գոնէ իմ սուրս քու կենիդ ալ կարող է, հապա ուր է իրը։

Վարժութիւն

1. Սահմանել, լսել, դառնալ, նկատել, ձեւել.



2. Ծալլել, բաժնել, ածել, ոռոգել, պատուաստել.
3. Աման, հեղուկ, աղբիւր, ժամացոյց, տեսարան.
4. Հագուստ, նամակ, հաւկիթ, պարտէզ, գետ։

---

## 8 ՁԱՅՆԱՐԿԵԼ

### ԴԱՍ Ա. — Միջարկութիւն

ԿԱՆՈՆ. — Նախադասութիւններ գրէ հետեւեալ բառերով.

ողջոյն, ո՜հ, ա՜հ, վա՜հ, ափսո՜ս, մե՜ղք, երանի՜ թէ, ապրի՜ս,

Օրինակ

Ողջոյն ձեզ, բարեկամներ. Ո՜հ, իմ հայրենի երկիրս. Ո՜հ երջանիկ պիտի լինէիր. Վա՜հ, բարեկամ, որչափ փոխուեր ես. Ափսո՜ս, աշխարհ մութ է ինձ. Մե՜ղք որ իմ յոյսերս չկատարուեցան. Երանի՜ թէ այս լուրը չհասնէր. Ապրի՜ս, զաւակս։

Վարժութիւն

1. Լալ, աղաչել, վշտանալ, մեռնիլ, ժպտիլ.
2. Մահ, խաղաղութիւն, հայրենակից, խնդութիւն, վիշտ.
3. Յոյս, աղմուկ, անբաղդ, ծով, թնդանօթ։

---

## ԴԱՍ Բ. — Միջարկութիւն

ԿԱՆՈՆ. — Նախադասութիւններ գրէ այս բառերով.

Բոբէ՛, վա՜յ, ո՜հ, ա՜յ, է՜, հէ՜, վա՜շ, ահա՜.

Օրինակ

Բոբէ՛, իր փափաքին չհասաւ. Վա՜յ գլխուն. Ո՜հ, անգութ մարդիկ. մի՛ մօտենաք ինձ. Ա՜յ թշուառական, ինչպէս փախար. Է՜ չե՞ս լսեր ըսածս. Հէ՜, ուր են սպասաւորները. Վա՜շ դու մեծ մեծ խօսեցար բայց բան մը չըրիր. Ահա՜ երեւցան մեր բարեկամները։

Վարժութիւն

1. Պատերազմ, բանակ, փախուստ, յարձակում.
2. Ցանցառ, մարդ, անմիտ, փափաք, երկիւղ։



# ՄԱՍՆ Թ.

## ԴԱՍ Ա. — Իրերու հանգամանք.

ԿԱՆՈՆ. — Գրէ այնպիսի իրեր որ տարբեր ձեւ, հոտ, համ, գոյն ու ձայն ունենան, և այդ հանգամանքներն անուանէ։

Օրինակ

Կարկին. սեղան. երկիր. վարդ. յասմիկ. կինամոն. պղպեղ. ածուխ. Նուռ. Թմբուկ. դաշնակ։

Վարժութիւն

Կամուրջ . . . ։ գունտ . . . ։ ձուաձեւ . . . ։ բոլորշի . . . ։ կծու . . . ։ համեղ . . . ։ անուշ . . . ։ կարմիր . . . ։ դեղին . . . ։ սուր . . . ։ քաղցր . . . ։

---

## ԴԱՍ Բ. — Շարժում եւ հանգիստ

ԿԱՆՈՆ. — Գրէ կամ յիշատակէ անասուններ ու բայեր որ շարժում ու հանգիստ յայտնեն,

Օրինակ

Արագ. դանդաղ. վազել. նիրհել. դողալ. մնայուն. գործօն։

Վարժութիւն

. . . . . . . . . . . . . . . . . .

### ԴԱՍ Գ. — Հակադարձ իմաստներ.

ԿԱՆՈՆ. — Գրէ այնպիսի բառեր որ իրարու հակառակ իմաստ բացատրեն։

Օրինակ

Բաղդ — անբաղդ. բարի — չար. տգեղ — գեղանի. սև — ճերմակ. փոքր — մեծ. ուղիղ — ծուռ. արդարութիւն — անիրաւութիւն. գիտութիւն — տգիտութիւն. հեռու — մօտ։

Վարժութիւն

Պաղ — բարեկամ — արևելք — հիւսիս — բարձր — իմաստուն — անուշ — գէր — ջանասիրութիւն — մոռնալ — գործել — ապրիլ — արտաքին — բարութիւն — առողջութիւն — աղքատութիւն։

---

### — ԴԱՍ Դ. Լրացուցիչ.

ԿԱՆՈՆ. — Գտիր բառեր որ իմաստ լրացնեն։

Օրինակ

Վարդն անուշահոտ է, բայց ունի փուշեր.
Ախորժելի է գարունն, բայց վաղանցիկ.
Ծիածանը շատ սքանչելի է, բայց շուտ կ'անցնի.
Գորտն ունի չորս ոտք և կ'ցատկէ ցամաքի վրայ, բայց կրնայ նաև լողալ.



Ձուկը չունի ոչ ոտն և ոչ թև, ոչ կ'սողայ, ոչ կ'քալէ և ոչ կ'թռի, այլ կ'լողայ։

Վարժութիւն

Ծնծղուկն ունի միայն . . . ։ Գրեթէ ամեն կենդանի իրեն յատուկ ձայնն ունի, արտուտն ու սոխակը . . . խոզը . . . բուն . . . սագը . . . կան կենդանիներ որ ունին . . . կան որ ։ . . ուրիշներ ունին . . . ։ Գիտեմ որ կրակը . . . ձիւնը . . . արևուն լոյսն . . . քարը . . . ապակին . . . ժայռերը . . . ։

---

### ԴԱՍ Ե. — Համանիշ բառեր.

ԿԱՆՈՆ. — Գտիր ու բացատրէ բառեր որ գրեթէ նոյն իմաստն ունենան։

Օրինակ

Ստուեր — շուք — հովանի. Դառն — տտիպ — թթու — բարկ. Պատ — որմ — պարիսպ. Կտոր — բեկոր — նշխար. Դատարկ — պարապ — ունայն — զուր — սին։ Ճամբայ — ուղի — ռահ — ճանապարհ. Վտիտ — լղար — նիհար — Պոռալ — գոչել — աղաղակել — ձայնել. Կրթել — մարզել — հրահանգել — դաստիարակել։

Վարժութիւն

Ամուր . . . կորուկ . . . կլոր . . . ուղիղ . .

փայլուն . . . գագաթ . . . պալատ . . . արատ . . . ճար . . . գոչել . . . շաղել . . . շուտ . . . մութ . . . գութ . . . դրնդլին . . . դուպար . . . շտապել . . . գոյն . . . ։

---

## ԴԱՍ Զ· — Համաձայն բառեր

ԿԱՆՈՆ· — Գտիր բառեր որ գրէթէ նոյն հնչիւնն ունենան, այլ տարբեր իմաստ ։

### Օրինակ

Գայլ — քայլ · գառ — քար · սար — սառ · փառք — բարք · ճար — ճառ · գէշ — գեշ · գէտ — գետ — գէթ · պէտ — պետ · գէր — գեր · ներ — նեռ ։

### Վարժութիւն

Քան . . . սան . . . ագի . . . խառան . . . խայտ . . . բոր . . . քրքանք . . . գոյն . . . քրքիր . . . քոռ . . . քրքրեմ . . . թառ . . . դեր . . . դաւ . . . թիւրիմացութիւն . . . թև . . . դի . . . գոյլ . . . թոր . . . դադար . . . ։

---

## 9. ՆԱԽԱԴԱՍՈՒԹԵԱՆ ՄԱՍՈՒՆՔ

## ԴԱՍ Է·

ԿԱՆՈՆ· — Գրէ մի քանի բառ իրարու մօտ այնպէս որ իմաստ մը բացատրեն ։



### Օրինակ

Երկիրը գնդաձև է ։

### Վարժութիւն

Լեռ — ծով — պարտէզ — դաս ։

Ուրեմն խօսքն իմաստի մը բացատրութիւն է, հայելին է ։

ԿԱՆՈՆ· — Երբ խօսքը լոկ իմաստ մը կ՚յայտնէ կ՚ըսուի պարզ նախադասութիւն · երբ խօսքն երկու, երեք, չորս և այլն իմաստներ իրարու մօտ կ՚բացատրէ կ՚կոչուի բաղադրեալ կամ բարդ նախադասութիւն ։

### Օրինակ

Երկիրն՝ որ գնդաձև է, կ՚դառնայ արևուն շուրջն և այս շրջանը կ՚ըլնէ մէկ տարուան մէջ ։

Այս նախադասութիւնը բարդ է · երեք իմաստ կ՚պարունակէ ։

ԿԱՆՈՆ· — Նախադասութիւնն ունի երեք մաս, որ կ՚կազմէ շարադրութեան հիմն կամ միութիւնը · այս է՝ ենթակայ, շաղկապ և ստորոգելի ։

Ենթակայն՝ անձն կամ իրն է որու վրայ կ՚խօսուի կամ կ՚գրուի ։

Շաղկապն էական բային մի մասն է և ենթական կ՚շուգորդէ ստորոգելիին հետ ։

Ստորոգելին ենթակային յատկութիւնը կ՚ցուցնէ ։

Այսպէս ։

Ենթակայ · Զուգորդ · Ստորոգելի ·
Երկիր · է · Գնդաձև ·

Երբեմն նախադասութիւն մը կ'պարունակէ միայն երկու բառ ·

Օրինակ

Հայրս կ'գրէ ·

Հայր ենթակայն է · կ'գրէ կ'պարունակէ թէ զուգորդը կամ էական բայն, այսինքն՝ է և թէ ստորոգելին, որ է գրող ։

Ցոյց տուր հետեւեալ նախադասութեանց երեք մասերը ։

Վարժարանն օգտակար է ։

Աստուած արդար է ։

---

## ԴԱՍ Ը · — Բարդ Նախադասութիւններ

ԿԱՆՈՆ · — Պարզ նախադասութիւններ բարդ կամ բաղադրեալ նախադասութեանց վերածելու համար կ'գործածուին շաղկապներ, յարաբերականներ, դերբայներ և այլն ։

Օրինակ

Պարզ ·

1· Ոսկին թանկագին մետաղ մ'է ·
Արծաթը թանկագին մետաղ մ'է ·
2· Թթուածինը կարեւոր է շնչառութեան համար ·
Բորակածինը կարեւոր է շնչառութեան համար ·
3· Կեսար մեծ զօրավար մ'էր ·
Պոմպէոս մեծ զօրավար մ'էր ·



4· Զօրավարն անկարող էր յառաջանալ ·
Տեղակալն անկարող էր յառաջանալ ·
5· Այս աշակերտն առաւ մրցանակն ·
Այս աշակերտն շատ աշխատեցաւ ·
6· Ուղեւորն պանդոկն իջաւ ·
Պանդոկին մէջ ճաշ ըրաւ ·
7· Տուի նամակս սպասաւորին ·
Սպասաւորը տարաւ զայն թղթատունը ։

Բարդ

1· Ոսկին ու արծաթը թանկագին մետաղ են ·

2· Թթուածինն ու բորակածինն կարեւոր են շնչառութեան համար ։

3· Կեսար և Պոմպէոս մեծ զօրավարներ էին ·

4· Թէ զօրավարն և թէ տեղակալն անկարող էին յառաջանալ ։

5· Աշակերտն առաւ մրցանակն, քանի որ շատ աշխատեցաւ ·

6· Ուղեւորն իջաւ պանդոկն՝ ուր ճաշ ըրաւ ·

7· Տուի նամակս սպասաւորին, որ թղթատունը տարաւ զայն ։

Վարժութիւն

պարզ — 1· Այս աշակերտն ուշիմ է ·
Նա ունի լաւ սիրտ ·
Նա չսիրեր աշխատանք ·
Նա ուսման օգուտը չգիտէ ։

բարդ՝ . . . . . . . . . . . . . . .

պարզ — 2. Կովն օգտակար կենդանի մ'է.
Կովը մեզի կաթ կ'հայթայթէ.
Պանիրը ու կարագը կաթէ կ'շինուին.
Կարագը կարեւոր սնունդ մ'է։

բարդէ՛ . . . . . . . . . . . . .

պարզ — 3. Ս. Մեսրոպ գտաւ Հայնաւոր տառերը.
Ս. Մեսրոպ ծնաւ Օշական գիւղը.
Նա շատ իմաստուն եկեղեցական մ'էր.
Նա լոյս սփռեց հայոց մէջ։

բարդէ՛ . . . . . . . . . . . . .

---

## ԴԱՍ Թ. — Պարզումն

ԿԱՆՈՆ. — Բարդ խօսքեր պարզէ։ Նախ զատէ նախադասութիւններն, ապա կցող անուններ ջնջէ և անոնց տեղը դիր զանց առնուած բառեր։

### Օրինակ

Բարդումն. — Կալիլէոս լսելով որ Մէտիոս հեռադիտակ մը հնարեր էր, ինք ալ, առանց տեսնելու այդ գործին, շինեց հատ մը իրեն համար և անով շատ գիւտեր ըրաւ։

Պարզումն. — Մէտիոս հեռադիտակ մը հնարեր էր.
Կալիլէոս լսեց այդ բանը.
Կալիլէոս չտեսաւ գործին.
Նա շինեց հատ մ'իրեն համար.
Նա այդ գործիքով ըրաւ շատ գիւտեր։



### Վարժութիւն

Բարդումն. — Հայք, որ աշխարհիս զանազան կողմերը ցրուած են, ունին միութեան կապ, Եկեղեցին, այնպէս որ եթէ եկեղեցին կործանի իրենք ալ կ'կորնչին։

բարդէ՛ . . . . . . . . . . . . . .

Ինչպէս կ'երեւի `ամէն գրաւոր շարադրութեան բաղադրիչ մասերն են պարզ նախադասութիւններ։ Բ.Ա. է արձակ կամ ոտանաւոր շարադրութիւն, որքան երկար ու կնճռոտ լինի, կրնայ բաժնուիլ այնպէս որ պարզ նախադասութիւններն երեւան կ'ելնեն։ Ահա օրինակ մ'ալ, որու մէջ առաջին սիւնակը կ'ներկայէ այլ և այլ տուներ իրարու հետ կապուած կամ համադրական ձեւով. մինչդեռ երկրորդ սիւնակին մէջ տուներն նախադասութեանց վերածուած կամ վերլուծական ձեւով գրուած են։

| Բարդ | Պարզ |
|---|---|
| Օրին մէկը Գայլն ու Գառնուկը ջուր կ'խմէին առուակի մը եզրը. Գայլը առուակին վերի կողմն էր. իսկ Գառնուկը վարի. Գայլը կ'գանգատի և կը ամբաստանէ Գառնուկն թէ իր ջուրը կ'պղտորէ. Գառնուկը կ'պատասխանէ թէ այդ անկարելի է. քանի որ ինքը վարի կողմը կ'գտնուէր. Բայց Գայլին միտքը գէշ էր. ասոր ուրիշ հնար մը փնտռել կ'ըսէ. մեկ ամիս առաջ դու բամբասեցիր | 1. Օրին մէկը Գայլն ու Գառնուկը առուակի մը եզրը ջուր կ'խմէին.<br>2. Գայլը վերի կողմն էր.<br>3. Գառնուկը վարի կողմն էր.<br>4. Գայլը ամբաստանեց Գառնուկն.<br>5. Թէ իր ջուրը կ'պղտորէ.<br>6. Գառնուկը պատասխանեց.<br>7. Այդ անկարելի է.<br>8. Ջուրն հակառակ կողմէ կը հոսի.<br>9. Գայլին միտքը գէշ էր.<br>10. Ան ուրիշ հնար մը կը փնտռէ.<br>11. Ան ըսէ. |

զիս. Գառնուկը կ'պատասխանէ թէ ինք տակաւին մէկ երկու ամսուան է. Գայլը կը զայրանայ և գառնուկին վրան յարձակելով զայն կ'յափշտակէ կ'տանի.

12. Վեց ամիս առաջ բամբասեցիր զիս.
13. Գառնուկը կ'պատասխանէ.
14. Ես դեռ երկու ամսուան եմ.
15. Գայլը կ'զայրանայ.
16. Գայլը գառնուկին վրայ կը յարձակի.
17. Գայլը կ'յափշտակէ զանի.
18. Գայլը կ'տանի զանի.

## 10. ՇԱՐՔ. — ԸՄԲՌՆՈՒՄԻ ԱՐԴԻՒՆՔ

### ԴԱՍ Ա. — Տեսանելիք

ԿԱՆՈՆ. — Աչքիդ առջև առարկայ մը դիր, ուշադիր քննէ զայն աչքովդ. պէտք չէ որ զայն շօշափես, ոչ ճաշակես և ոչ հոտոտես: Յետոյ ինչ որ աչքովդ տեսար գրէ,

Օրինակ — Կտոր մը կնքամոմ.

Այս կնքամոմին կտորը գրեթէ չորս բթամատ երկայն է, կէս բթամատ լայն, և մէկ քառորդ բթամատ խիտ: Գոյնը շատ փայլուն կարմիր է և վրան գործարանատէրին անունը դրոշմուած կայ: Ապակիի պէս կ'շողայ երեսը, այնպէս որ կարծեմ թէ ողորկ է, թէև չեմ կրնար այս բանս ստուգապէս հաստատել, եթէ զայն չշօշափեմ: Մէկ ծայրը կոշտ է, որպէս թէ կտրուած լինէր, միւսը մխոտ, կանթեղի մը բոցին վրայ գլուած լինելուն.



Վարժութիւն

| | | |
|---|---|---|
| 1. Ոստեայ, | 3. Կաղամար, | 5. Փղոսկր. |
| 2. Ջմելին, | 4. Թևաթոռ, | 6. Աթոռակ. |

### ԴԱՍ Բ. — Ճաշակելիք

ԿԱՆՈՆ. — Առարկայ մ'առ բերանդ տար, բաւական է որ վնասակար բան մը չլինի, և ապա արդիւնքը բացատրէ:

Օրինակ — Թաս մը Թէյ

Այս թասին մէջ եղած նիւթը թէյ կ'կոչուի, թէև ճիշդը խօսելով, այս տունկին խաշած տերևներէն յառաջ եկած հեղուկ մ'է: Իր համն իրեն յատուկ է, բայց ախորժելի: Բնապէս քիչ մը դառն է, բայց եթէ մէջը շաքար դնես դառնութիւնը կ'անցնի, Հոտաւէտ է իր ճաշակն ու հաճելի.

Վարժութիւն

| | | |
|---|---|---|
| 1. Խաղող, | 5. Մեղր, | 9. Կինամոն, |
| 2. Գետնախնձոր, | 6. Նարինջ, | 10. Ձմերուկ, |
| 3. Լեմոն, | 7. Խահվէ, | 11. Խնձոր, |
| 4. Քացախ, | 8. Գինի, | 12. Պանիր, |

### ԴԱՍ Գ. — Հոտոտելիք

ԿԱՆՈՆ. — Հոտոտելիքդ գործածէ և արդիւնքը գրէ:

Օրինակ — Բացուած վարդ մը․

Այս աղուոր ծաղիկը վարդ կ'կոչուի։ Իր կոկոնները հետզհետէ կը բացուին և ամեն մէկէն զմայլելի հոտ կը բուրէ։ Բայց ամենէ աւելի անուշ հոտ բուրողը խոշոր վարդին թերթիկներն են։ Վարդի թերթերէն հանուած հիւթը սքանչելի բուրմունք մ'ունի որ կ'ըսուի վարդի իւղ։

Վարժութիւն

1․ Մանիշակ, 5․ Յասմիկ, 9․ Կուպր,
2․ Մեխակ, 6․ Պղպեղ, 10․ Նոր կաթ,
3․ Նարինջ, 7․ Սուրճ, 11․ Քրքում,
4․ Յակինթ, 8․ Շուշան, 12․ Ռեհան,

---

ԴԱՍ Դ․ — Շօշափելիք

Աչքդ գոցէ, առարկայ մը շօշափէ և արդիւնքը գրէ։

Օրինակ — Ոսկեզօծ հատոր մը․

Շօշափելով կ'ըմբռնեմ որ այս գիրքը գրեթէ տաս բթամատ երկայն է, վեց բթամատ լայն է և երեք բթամատ խիտ։ Կաշին շիտակ և կարծր է. ետևի կողմն ուռուցիկ պարզեր կան։ Կարծեմ թէ կրակին մօտ էր, վասն զի քիչ մը տաք է։



Վարժութիւն

1․ Դուռ, 5․ Քար, 9․ Հինգնոց մը,
2․ Սպունգ, 6․ Մարմար, 10․ Գնդակ մը,
3․ Հաց, 7․ Թուղթ, 11․ Ակնոց,
4․ Զանգակ, 8․ Մետաքս, 12․ Աճառ։

---

ԴԱՍ Ե․ — Լսելիք

ԿԱՆՈՆ․ — Ձայն առարկայի մը, կամ անոր բնական հնչիւնները մտիկ ըրէ և գրէ լսածդ։

Օրինակ

Անցած իրիկուն հովին ականջ դրի։ Երբեմն շատ ուժէն կը հաչէր, ապա բարակ կը սուլէր։ Այս սուլումին կը յաջորդէր խոր մռնչիւն մը, և ապա ջրվէժի պէս բարձրագոչ կը գոռար։ Այս աղմուկը դադրեցաւ և յետոյ կէս մը կը սուլէր և կէս մը կը շշէր։ Վերջապէս հովը մեղմիկ մռմռալով բոլորովին հանդարտեցաւ։

Վարժութիւն

1․ Փող, 5․ Ծովը, 9․ Թնդանօթ
2․ Տաւիղ, 6․ Ծառեր, 10․ Պատերազմի ժխոր,
3․ Թմբուկ, 7․ Կայծակ, 11․ Գեղջական ձայներ,
4․ Հրաշէնք, 8․ Կարկուտ, 12․ Փողոցի մէջ ձայներ։

---

## ԴԱՍ Ջ. — Բոլոր զգայարանքով

ԿԱՆՈՆ. — Աչքերդ առջեւը դիր առարկան։ Զատ զատ ամէն մէկ զգայարաններովդ քննէ զայն մտադրութեամբ։ Յետոյ ինչ ծանօթութիւն որ ստացար իւրաքանչիւր գործարանէ թղթի վրայ գրէ։ Մէկ զգայարանքէ ստացած ծանօթութիւնդ նշանակելէն ետեւ միայն միւսին անցիր։

### Օրինակ — Մատիտ մը.

1. Իմ աչքս կը յայտնեն ինծի որ մատիտը գրեթէ հինգ բթամատ երկայն է եւ մէկ քառորդ բթամատ թանձր։ Իր ձեւը սիւնակի մը պէս կլոր է, մէկ ծայրէն բոլորովին տափակ, եւ միւս ծայրէն սուր։ Իր գոյնը աղուոր բաց գորշ է սեւ բիծերով։ Այս միջոցին մատիտը ճերմակ թղթի վրայ դրուած է, մէկ կողմէն հին գրիչ մը կայ, եւ միւս կողմէն կարմիր կնքամոմի պզտիկ կտոր մը։ 2. Զայն շօշափելով՝ կը գտնեմ որ իր ձեւը ճիշդ այն ձեւն ունի ինչ որ աչքովս հասկցայ. բայց բան մը կ'ստուգեմ որ իմ աչքովս չէի կարող որոշել, այսինքն թէ մատիտն ալ կնքամոմի կտորին պէս կարծր է։ Բոլորովին հարթ է։ 3. Երբոր մատիտը քթիս կը տանիմ՝ կ'ըմբռնեմ որ ախորժելի թեթեւ հոտ մ'ունի, մայրի փայտի հոտի պէս։ 4. Իր համն անուշիկ է։ 5. Բնաւ հնչիւն մը չհանէր։

### Ա. Վարժութիւն — Պղնձէ տասնոց մը

1. Բոլորակ. թանձրութիւն. տափակ. ծայր. դրոշմուած. պատկեր կամ գիր. գոյնը երբ նոր է, երբ հին է, արծաթ հինգնոցի մօտ։ 2. Կարծր. ողորկ. պաղ. դրոշմ։ 3. Մետաղեայ. պղնձեայ. ժանգոտ։ 4. Կծու. մետաղեայ. անհաճոյ։



### Բ. Վարժութիւն — Նարինջ

1. Գնդաձեւ. երկրին պէս բեւեռներուն կողմը տափարակ. տրամագիծ երեք բթամատ. գոյն. պնակի մը մէջ արծաթ դանակի մը մօտ։ 2. Կլոր. կարծր. կակուղ. մսոտ, 3. Զմայլելի հոտ. բուրմունք. հոտը բոլոր սենեակը կը լնու։ 4. Աղուոր, անուշ։

### Գ. Վարժութիւն — Ժամացոյց մը

1. Տափակ. բոլորշի . . ծայրերը կլոր . սպիտակ. մաքուր . փայլուն . նոր . արծաթաչէն . տրամագիծ գրեթէ երկու բթամատ եւ այլն։ 2. Վրան ողորկ. տակը կոշտ . կարծր . պաղ. ծանր։ 3. Մետաղեայ։ 4. Համ չունի։ 5 Թեթեւ զարկ։

### Դ. Վարժութիւն — Ունելի

1. Երկայն. բարակ. փայլուն. ողորկ. հոր. երկաթ։ 2. Շիտակ. կարծր. մէկ ծայրը սուր. ծանր։ 3. Մետաղեայ. ծծմբուտ։ 4. Երկաթի։ 5. Երբ վար կ'իյնայ հնչական աղմուկ մը կը հանէ։

### Ե. Վարժութիւն — Լեմոն.

1. Ձուաձեւ. լայն. մէկ ծայրը կոշտ. երեք բթամատ երկայն. աղուոր բաց դեղին։ 2. Ձուաձեւ. կոշտ. նարինջի պէս ողորկ չէ։ 3. Խիստ անուշ հոտ։ 4. Չափազանց թթու, բայց ախորժելի, երբ շաքարախառն է կամ քամուած։

Զ. Վարժութիւն — Խնձոր մը.

1. Կլորիկ. լայն. տրամագիծ երեք բթամատ. դալնաւան գոյն. տեղ տեղ կանանչ. տեղ տեղ դեղին. կարմիր. թուխ։ 2. Ողորկ. կարծր. պինդ. 3. Թեթեւ բայց խիստ ախորժելի հոտ։ 4. Հաճելի ճաշակ. անուշ թթուաշամ. երբ աղէկ հասունցած է։

Վարժութիւն — Է. Գրիչ

1. Գլանաձեւ. գոգաւոր. մէկ կողմը սրածայր, միւսը մաչկաձեւ. երկայն մէկ բթամատ. լոյնութիւն. գոյն. արծաթեայ. սեւ. գորշ. դեղին. փայլուն. մետաղոտ։ 2. Ճկուն. կարծր. բարակ։ 3. Համ չունի.

Ը. Վարժութիւն — Մոմ.

1. Բոլորշի. երկայն կէս կանգուն. տրամագիծ մէկ բթամատ. սպիտակ. դեղնորակ. ծայրը սուր. պատրոյգ։ 2. Ողորկ. կարծր. բեկուն։ 3. Խնկահոտ։ 4. Անախորժ ճաշակ։

Դասատուն կրնայ այս վարժութիւնները շարունակել, ուրիշ առարկաներ առաջարկելով աշակերտին՝ որպէս զի անոնց ձեւը, մեծութիւնը, գոյնը, թիւը, դիրքը, հոտն ու համը նկարագրէ։



## ԺԱ. ՇԱՐՔ — ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՓՈՐՁ

### ԴԱՍ Ա.

ԿԱՆՈՆ. — Առարկայ մը դիր աչքիդ առջեւ։ Առաջուան պէս քննէ զայն զգայարանացդ միջոցաւ. ապա փորձեր ըրէ վրան եւ քննութեանդ արդիւնքը գրի առ։

Օրինակ — Զգական խէժի կտոր մը.

Զգական խէժի, կամ **քէհրիպարի** այս կտորն երեք բթամատ երկայն է, երկու բթամատ լայն եւ մէկ բթամատ խիտ։ Գոյնը գրեթէ սեւ է, մէջ տեղ ճերմկեկ կամ մոխրագոյն մասեր ունի, մինչդեռ մէկ քանի տեղերը դորշկեկ է։ Զօրաւոր եւ քիչ մ'անախորժ հոտ մ'ունի։ Յատուկ համէ զուրկ է, թէեւ կան տղայք որ զայն ծամել կը սիրեն։ Հիմայ մէկ քանի փորձեր պիտի ընեմ անոր վրայ։ Երբ մէկ ծայրէն կը բռնեմ, միւսը դու քաշէ. եթէ ձեռքէդ թողուս՝ իր առաջին ձեւը կ'առնու։ Այսպէս կը տեսնեմ որ խէժն **առաձգական** է։ Յետոյ պզտիկ կտոր մը կը նետեմ կանթեղին բոցին մէջ եւ կը դիտեմ որ դիւրաւ կը բորբոքի, փայլուն լոյս մը կը հանէ, որուն վարի կողմը սպիտակ է եւ կատարը՝ կարմիր, եւ ասկէ զատ սաստիկ կը մխայ։ Այս փորձին վրայ կ'ըստուգեմ որ **դիւրավառ** է։ Իսկ երբոր ջրի մէջ նետեմ, կը նայիմ որ կը տատանի, այնպէս որ իր յատուկ ծանրութիւնն աւելի թեթեւ պիտի լինի քան թէ ջուրինը։ Ասկէ զատ՝ կը նայիմ որ իր քանակութիւնը չկորուսեր, ուստի կը հետեւցնեմ որ **անլուծանելի** է

ջրի մէջ։ Սակայն ըսին ինձ որ կուպրը կարող է լուծել զայն։ Տեսայ որ շատ օգտակար է մեր մատիտի գծերը սրբելու համար։

### Ա. Վարժութիւն — Ապակիէ պզտիկ կտոր մը.

1. Չափ. 2. Ձեւ. 3. Գոյն. 4. Ծանրութիւն. 5. Ջերմութիւն. 6. Պնդութիւն. 7. Հոտ. 8. Ճաշակ. 9. Փորձեր։

### Բ. Վարժութիւն — Ածուխ.

Չափ, ձեւ. և ուրիշ հանգամանքներ, ինչպէս վերըն ըսինք։

Փորձ. — 1. Ջրով. 2. Կրակով. 3. Մուրճով. 4. Կաւով։

### Գ. Վարժութիւն — Թերթ մը թուղթ.

Մեծութիւն, ձեւ և այլն։ ինչպէս վերն ըսինք։

Փորձ. — 1. Ջրով. 2. Կրակով. 3. Ներկով. 4. Մատիտով. 5. Մելանով 6. Թթուով։

### Դ. Վարժութիւն — Կնքամոմ.

Մեծութիւն, ձեւ, գոյն, ծանրութիւն, կարծրութիւն և այլն։

Փորձ. — 1. Ջրով. 2. Բոցով. 3. Նամակ մը կնքէ— կպչուն. 4. Քաշելով բարձրացուր — կ՚ելլէ։



### Ե. Վարժութիւն — Երկաթէ թել.

Ձեւ, չափ, գոյն և այլն։

Փորձ. — 1. Ծանր բեռ կը վերցընէ. 2. Ջրի մէջ նետէ. 3. Կրակի մէջ դիր. 4. Թող բաց օդին թրջած մնայ և անոր վրայ տեսածդ գրէ։

### Զ. Վարժութիւն — Աղ.

Ձեւ, չափ, գոյն, և այլն։

Փորձ. — 1. Պաղ ջուր. 2. Տաք ջուր. 3. Բոց. 4. Կրակ. 5. Թթու։

## 12. ՇԱՐՔ. — ԻՐԵՐՈՒ ԾԱԳՈՒՄԸ

### ԴԱՍ Բ.

ԿԱՆՈՆ. — Առարկան աչքիդ առջեւը դիր։ Անոր ծագումը կամ ուսկից յառաջ գալը գտիր։ Եթէ չես գիտեր, դասատուիդ հարցուր, կամ գիրքի մէջ գտիր։ Յետոյ բոլոր սորվածդ գրէ։ Այն ատեն պիտի կարենաս պատմել անոր երեւոյթը, յատկութիւններն և այլն։ Կարող ես քանի մը փորձեր ընելէն ետեւ՝ նկարագիրդ աւարտել։

### Օրինակ — Կապարէ կտոր մը.

Իմ առջեւս գտնուած նիւթը մետաղ մ՚է որ կապար կ՚ըսուի։ Կապարագործին խանութէն առի այս

կտորը և ինքն ալ կապարավաճառէն գնեց: Գործաւորներ հանքերէն կը հանեն քրէական նիւթեր և հալեցընելով կապար կ'ըստանան: Այս հանքերը կը գտնուին Փոքր Ասիոյ այլ և այլ կողմերը: Կապարը կապուտակ ճերմակ գոյն ունի. շատ կը փայլի երբ նոր կտրուած կամ հալած է, բայց այս փայլութիւնը կ'անցնի երբոր ժամանակ մը օդին մէջ մնայ: Բնաւ համ չունի, բայց եթէ շփես, թեթեւ հոտ մը կը հանէ: Շատ կակուղ է կապարը և կարելի է ծեծելով բարակ թիթեղներ շինել: Եթէ կտոր մը կրակին մէջ դնես շուտով կը հալի:

### Ա. Վարժութիւն — Հացի կտոր մը.

1. Հացագործ. փուռ, ալիւր, աղցբեղան, աղօրի, շոգի, ձիեր, ջուր, ափարակապան, հող, հերկել, տափան, արեւ, անձրեւ, հունձք, ծեծել, շտեմարանել, մաղել, մարդիկ, կանայք: 2. Կակուղ, ճերմակ, անուշ, սննդարար, ուտելիք:

### Բ. Վարժութիւն — Վանդակ մը.

1. 1. Դարբնոց, յունկն, դարբնել, ուրագ, փքոց, փուռ, երկաթավաճառ, երկաթի հանք, ածուխ, կիր, այրել, հալեցընել, հնոց. 2. Ձեւ, մեծութիւն, գոյն, ծանրութիւն և այլն:

### Գ. Վարժութիւն — Զգեստ մը.

1. Դերձակ. կտաւավաճառ գործարան, բուրդ, մաքրել, ներկել, մանել, հիւսել, բանիլ, ասրագործ, լուալ, խուզել, գզել, 2. Ձեւ, գոյն, տեսակ, և այլն.



### Դ. Վարժութիւն — Շաքար

1. Նպարավաճառ, Ամերիկա, նաւ, նաւազ, Ովկիանոս, դաշտ, Հնդիկ, շաքարի եղէգն, ճմլել, եփել, զտել. 2. Գոյն, մեծութիւն, հոտ, համ և այլն:

### Ե. Վարժութիւն — Կազ.

1. Խողովակ, կազի գործարան, կազի ածուխ, վառարան, կրաջուր, կազաչափ: Կազի ածուխին և հասարակ ածուխին մէջ եղած տարբերութիւնը: Ո՞ւր կը գտնուի առաջինը. 2. Ցատկութիւն, ծանրութիւն, հոտ, համ և այլն:

### Զ. Վարժութիւն — Թուղթ.

1. Թղթածախ. Թղթագործ, ջրաշարժ կամ շոգեշարժ աղօրի, քուրջ, խաշել, ձեւել, և այլն. Գրչավաճառ. լաթ, վուշ, տունկ, պատրաստելու եղանակ և այլն: 2. Ձեւ, մեծութիւն, գոյն, տեսակ:

---

## 13. ՇԱՐՔ. — ԻՐԵՐՈՒ ԿԻՐԱՌՈՒԹԻՒՆ

### ԴԱՍ Գ.

ԿԱՆՈՆ. — Առարկան աչքիդ առջեւը դիր, և մըտածէ թէ սովորաբար ինչ բաներու համար կը գործածուի: Եթէ չգիտես, հարցուր դասատուիդ, կամ գրքի մը մէջ փնտռէ:

Օրինակ — Կապարէ կտոր մը.

Այս մետաղը շատ բաներու համար կը գործածուի։ Անով կը շինուին ջրի խողովակներ, ջրամբարներ և տուներու առաստաղներ։ Քիմիաբանները կապարով երկու նիւթ կը շինեն, որ կը կոչուին կարմիր կապար, որոց երկուքն ալ թունաւոր են։ Եթէ անոր հետ կռած խառնենք, օգտակար խառնուրդ մը առաջ կը գայ որ կը կոչուի անագ, որով երբեմն սեղանի դգալներ կը շինուին։ Իսկ երբոր կապարը ծարիրի հետ հալեցընենք նոր բաղադրութիւն մը կ՚ունենանք, որով տպարանի տառեր կը թափեն։

Վարժութիւն

| | | |
|---|---|---|
| 1. Երկաթ և պողպատ. | 5. Ոսկի. | 9. Ոչխար. |
| 2. Բուրդ. | 6. Կաշի. | 10. Արծաթ. |
| 3. Կաղենի. | 7. Բամպակ. | 10. Ջուր. |
| 4. Ապակի. | 8. Վառօդ. | 10. Շոգեշարժ (մեքենայ։ |

## 14. ՇԱՐՔ. — ԻՐԵՐՈՒ ՄԱՍՈՒՆՔԸ

### ԴԱՍ Դ.

1. Առարկան աչքիդ առջևը դիր. հարցուր թէ ինչպէս այն տեղ եկեր է։ Ըսէ թէ նոր գնեցիր զայն, և թէ խանութպանն ուսկից առեր է և այլն։ Պատմէ թէ բնական է և ոչ արուեստական, պարզ թէ բաղադրեալ է և այլն։



Օրինակ — Զմելի մը.

Սեղանին վրայ զմելին մը կայ։ Բ . . . ին խանութէն գնեցի։ Կամ ինք շինած է զայն, կամ Նորքըշայրի Շէֆիլտ ըսուած քաղաքէն ծախու առած է, ուր շատ կը շինեն։ Երկու մաս ունի որոց իւրաքանչիւրը տարբեր նիւթէ կը բաղկանայ։ Կոթը թերևս եղջերուի եղջիւրէ է, մոխրագոյն, կոշտ ու կարծր։ Վրան շատ մը մանր երիթներ կան որպէս զի զըմելին այլ և այլ կողմերը հաստատ մնան։ Մէկ կողմէն արծաթէ շատ փոքր թիթեղ մը կայ. վրան փորագրուած է շինողին անունը։ Երկրորդ նիւթը պողպատ է, որով շինուած է շեղբը։ Պողպատը արուեստական մետաղ մ՚է, և քարածուխով պատրաստուած երկաթի արդիւնքը։ Շատ կարծր ու հարթ է։ Եթէ լաւ մը մխուած է շատ ընտիր շեղբեր շինելու կը ծառայէ։

Ա. Վարժութիւն — Սենեակ մը.

1. Գետին, տախտակ, գործարար, գոյն ձև, հիւսուածք, չափ. 2. Պատեր, քար, շաղախ, թուղթ, գոյն, տեսակ, 3. Ձեղուն, շրջանակ, բաժանում, նիւթ։

Բ. Վարժութիւն — Վառարան.

1. Մարմար, գոյն, տեսակ, ձև և այլն. 2. Վանդակ, նիւթ, հրարգել. 3. Երկաթէ կտորներ, թի, ունելիք և այլն։

Գ. Վարժութիւն — Գիրք մը.

Թերթեր, երեսներ, լուսանցք, թիւ, ծայր, նը-

կար, տառեր, կարել, կազմել, շարել, տպել, հեղինակ, տպագրիչ, կազմարար, գրավաճառ:

Դ. Վարժութիւն — Կաղամար.

Մետաղէ շինուած է կաղամարը, արոյր, զարդեր ունի. երկու ապակիէ սրուակներ մելանի համար— մին սև մելանին և միւսը կարմիր մելանին սահմանուած. մոմ մը, կնքամոմ, գրիչներ, մատիտներ, օստեաներ:

Ե. Վարժութիւն — Նաւ մը.

Նաւ, ողնափայտ, յառաջակողմն, խելք, կող, ատաղձ, կամուրջ, բարձրաւանդակ, միջակողմն, ստորնայարկ, միջնակայմ, յետնակայմ, ցռուկ, պարան, խարիսխ, առագաստ և այլն:

Զ. Վարժութիւն — Տուն մը.

Հիմունք, պատեր, յարկ, գետին, դուռ, պատուհան, սանդուղ, վառարան, տախտակամած և այլն. ծեփ, նկար, ջրի, կազի խողովակներ և այլն:



# ՄԱՍՆ Գ.

## ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ

### Բուն նկարագրական

### ԴԱՍ Ա.

ՀՐԱՀԱՆԳ. — Եթէ նախորդ դասերուն միտ դըրիր, երբ առարկայ մը նկարագրես, հետևեալ հարցումները պիտի ընես անշուշտ իւրովի: Ի՞նչ է այդ առարկան. բնակա՞ն է թէ արուեստական, ի՞նչ տեսք, գոյն, ձև ունի. տարբեր յատկանիշ մ'ունի՞ ուրիշ առարկայէ մը, ո՞ւր կ'գըտնուի կամ կ'երևի. ի՞նչ բանի կ'գործածուի. ունի՞ պատմական կարևոր հանգամանք:

Աշակերտը պարտի նախ նշանակուած կարգով պատասխանել գրով այս հարցումներուն և ապա շարադրել՝ առարկային տեսակն կամ իր նպատակն ի նկատի առնելով:

Օրինակ. ԱՒԱԶ

1. Ի՞նչ է. — Աւազը զանազան ժայռերու անհամար մասնիկներէ կ'բաղկանայ,

2. Բնակա՞ն թէ արուեստական. — Աւազը կ'շինուի երբ ժայռերը հետզհետէ կ'փշրուին սառոյցի, անձրևի, շփումի և ուրիշ պատճառներու զօրութեամբ:

3. Ո՞ւր կ'գտնուի. — Գրեթէ ամեն տեղ և յատկապէս ծովեզրը.

4. Գործածութիւն. — Կ'գործածուի գլխաւորապէս շաղախ շինելու, որ տեսակ մը զանգուած է՝ այրած կրի, աւազի և ջրի բաղադրութեամբ:

(Ա. Փոխարկութիւն)

Աւազը կ'բաղկանայ այլազան ժայռերու անհամար մասնիկներէ․ այս մասնիկներն կ'գոյանան սառոյցի, անձրեւի, չփումի եւ ուրիշ պատճառներու ներգործութեամբ։ Աւազը կ'գտնուի գրեթէ ամեն տեղ եւ յատկապէս ծովափներու վրայ։ Երբոր աւազը կը խառնուի կրի եւ ջրի հետ կ'շինուի զանգուած մը՝ շաղախ անուամբ, որ այնքան շատ կ'գործածուի շինութեանց համար։

(Բ Փոխարկութիւն յատկական պարագայի)

Շինութեանց մէջ աւազն ամենէ կարեւոր նիւթն է։ Երբ կրի եւ ջրի հետ խառնուի՝ կ'կազմէ ամենէ աժան եւ օգտաւէտ զանգուած մը։ Աւազը կ'բաղկանայ ժայռերու հատիկներէ եւ գոյնով անհունս կը տարբերի։ Կայ թուխ, գորշ, սպիտակ կամ մոխրագոյն աւազ։ Աւազը գրեթէ ամեն ծովեզրեայ տեղեր կ'գտնուի, եւ երբեմն փոշիացած խեցիներու ձեւով, որ ունին փայլուն, աղւոր եւ կարմրուն գոյն մը։

Վերլուծութիւն. Ադամանդ

Նշանակէտ․ — Ադամանդի արժէքը․ պայծառ — օգտակարութիւն — գեղեցկութիւն, կարծրութիւն — տեւականութիւն։ Ադամանդ կ'գտնուի Հնդկաստան, Բրազիլ, Բարեյուսոյ Գլուխ։ Անուանի է Քօհինուր (լուսոյլեռ) որ կ'ըսուի թէ 2 միլիոն ոսկիի արժէք ունի։ Ադամանդ — զուտ ածուխ, ձեւ։



Մարմար

Նշանակէտ․ — Տեսակ մը կրաքար․ այլազան եւ այլագոյն մարմարներ․ մարմարի գեղեցկութիւն երեւան հանող միջոց․ Նշանաւոր մարմարի հանքեր (Քարարա․ ո՞ւր է) Բարոս․ եւ այլն․ Կիրառութիւն․ ճարտարապետութիւն․ Միլանի եւ Վենետկի մայր եկեղեցիներ․ արձանագործութիւն։

———

ԴԱՍ Բ․

ՆԱՊԷՍ ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ

ՀՐԱՀԱՆԳ․ — Երբ իրողութիւն մը պատմես պարտիս ճշտիւ, յստակ, որոշ եւ անփոփ կերպով ներկայես ամեն պարագայ որ այդ իրողութեան կ'վերաբերի։ Այս պայմանը կատարելու համար կարեւոր է ստէպ վարժութիւններ ընել, ընտիր գրուածներ կարդալ, միտք եւ երեւակայութիւն մշակել քան կանոններ սերտել։

Օրինակ

ՃԱՐՊԻԿ ՇՈՒՆԸ

Պատմագրելի կէտեր․ —

1․ Շան մ'արթնութիւն․

2․ Իր ճարպիկութիւնը ճաշին համար կտապ մը գնելու․

3․ Խանութպանը տաք կտապ մը կուտայ անոր․

4․ Շան տրտմութիւնն որով կտապը թողլով դրամը կ'առնու․

5․ Շունն այլ ևս չհանդիպեր փռապանին գրպանը։

(Համառօտ փոխադրութիւն)

Ճարպիկ շուն մը կար որ իր նախաճաշիկին համար կ'երթար հացագործի մը խանութն և քսաննոց մը տալով կտապ մը կ'գնէր։ Օր մը հացագործին տղան չարամտութեամբ փուռէն նոր ելած շատ տաք կըտապ մը տուաւ շան։ Շունն իսկոյն կտապը վար նետեց, դրամն առաւ, վազեց փախաւ և նոյն խանութէն այլ ևս երբէք չանցաւ։

Շարադրութեան այս ձևը շատ կարճ է։ Լաւ է համառօտ գրել այս պայմանաւ որ կարևոր կէտեր զանց չառնուին․ սակայն երբ պատմութիւնը շատ չոր ու ցամաք է զուրկ կ'մնայ կենդանութենէ։ Ուստի պէտք է քիչ մ'ոգի և աշխոյժ տալ ոճին և հետաքրքրաշարժ ընել։

(Բ փոխադրութիւն, երկարօրէն)

Պարոն մ'ունէր սիրական շուն մը։ Արտասովոր ուշմութիւն ցոյց կտար այդ կենդանին․ զարմանալի բնազդ մ'ունէր իր տիրոջ փափաքները գուշակելու և իր վիճակին յարմար գործեր կատարելու։ Իր մի խաղն էր դիմել հացագործին խանութն և իր նախաճաշիկին համար կտապ մը գնել, իր բերնին մէջ պահելով դրամն՝ որպէս զի վճարէ։ Օր մը հացագործին տղան նենգութեամբ տուաւ շան շատ տաք կտապ մը փուռէն հանելով։ Շունը բերնէն



վար նետեց զայն և դրամը կորզելով խոյս տուաւ, մինչդեռ հացագործին տղան ապուշ ապուշ կ'նայէր։ Շունն վերստին չերևցաւ նոյն խանութը։

———

Վարժութիւն

## ՊԱՐԶ ՋՐՈՅՑՔ

### ՀԵՐՄԷՍ ԵՒ ՓԱՅՏԱՀԱՏԸ

Պատմելի կէտեր․ —

1․ Մարդ մը փայտ կ'կտրէ գետակի մը մօտ․

2․ Տապարը կ'ընկնի ջուրը․

3․ Փայտահատին վիշտը․

4․ Հերմէս կ'ներկայի․

5․ Հերմէս ջուրը կ'մտնէ և ոսկետապար մը կ'հանէ․

6․ Փայտահատին պարկեշտութիւնը — կ'մերժէ զայն, ինչպէս նաև արծաթէ տապար մը․

7․ Ի վերջէ իր յատուկ տապարը կ'գտնուի․

8․ Փայտահատին երախտագիտութիւնը․

9․ Իր ուղղութիւննը ինչպէս կ'վարձատրուի։

### ՓԻՂԻ ՄԸ ՎՐԷԺՆ

Պատմելի կէտեր․ —

1․ Տեսարանը Սէյլանի մի գիւղի փողոցը․

2․ Փիղեր կ'անցնին աղբիւրն երթալու․

3․ Փիղեր կ'սիրեն թզենիի տերևներ․

4․ Մարդ մը թզի տերևի մը մէջ քար դնելով կտայ փղին․

5. Փիղը կուտէ սերկը, կ'նետէ քարը.

6. Փիղերու դարձ աղբիւրէն.

7. Փիղը կ'բռնէ մարդն — գետինը կ'նետէ և կոխելով կ'սպաննէ: —

(Այս վարժութեան նիւթերը կարելի է հետզհետէ դժուարացնել տալով պատմական, բանահիւսական խրողութիւններ և նկարագիրներ շարադրելու և արձակի վերածելու համար:)

---

## ԴԱՍ Գ.

## ԸՆՏԱՆԻ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀՐԱՀԱՆԳ. — Նախ լաւ խորհէ թէ ի՞նչ պիտի լինի նամակիդ նիւթը. ի՞նչ պիտի նկարագրես, ի՞նչ նպատակ ունիս. երկրորդ ջանա՛ պարզ, ընտանի և պայծառ ոճ մը գործածել, և կարելի եղածին չափ յարգական ձև մը պահել:

### Օրինակ

Զմիւռնիա 5 Յուլիս 1887

Իմ սիրելի եղբայր.

Թէ և մարմնով հեռի, միշտ ձեզի հետ եմ մտքով: Երբ ուսման ժամերս ներեն, հաճոյք կ'զգամ գրել ձեզի: Վստահ եմ որ դուք ալ նոյն սէրն ու կարօտն ունիք առ իս:

Պիտի ջանամ, եղբայր, ըստ կարի չուտով աւարտել իմ ուսմանցս շրջանն ու վերադառնալ ընտանեացս ծոցն, ուր կ'գտնեմ միայն կենդանութիւն և գորովալի զգացմունք: Աստ օտար եմ և գրեթէ անհանգիստ, մինաւորութիւնս սփոփելու համար մտաւոր եմ գրել երբեմն. դուք ալ անպատասխանի մի թողուք զիս և երկարօրէն գրեցէք ընտանեկան լուրեր:



Իմ սիրալիր բարևներս ամենուն:

Ձերդ անձնուէր

---

### Վարժութիւն

Նիւթ. առ հայր. — 1. Շնորհակալիք որ այնքան խնամք կ'տանի կրթութեանդ համար. 2. Բացատրէ թէ որքան կարևոր է այժմ ուսմունքն. 3. ի՛նչ օգուտ ունի կրթութիւնը — 4. ինչպէս կ'պատմուի ծոյլը և կ'վարձատրուի ժրաջան աշակերտը. 5. Գրէ թէ որքան շատ է փափաքդ յառաջանալու և ծնողացդ յոյսերն ի դերև չհանելու — :

Նիւթ. առ դաստիար. — 1. Գրէ թէ օրէ օր օգուտ կ'քաղես ուսմունքէդ և կ'սիրես աշխատիլ. 2. ժամանակին յարգն աւելի կ'ճանչես. 3. Մի քանի խօսք ըսէ շան վրայ, բացատրելով՝ կարևոր յատկութիւնները. 4. Շան հաւատարմութեան և ուշմութեան վրայ մի քանի օրինակներ բեր — 5. ի՞նչ տեսակ շուներ կան:

ՎԵՐՋ

Гос. Публ. Библиотека

2013 2840
ՀՀ Ազգային գրադարան
NL0060257